

<https://doi.org/10.46991/hc.2024.21.2.194>

"Community and Public Cultural Space Transformations in Post-Soviet Armenia: A Case Study of Border Settlements" Project<sup>1</sup>

**Haykuhi Muradyan**

<https://orcid.org/0009-0003-5399-5080>

Yerevan State University, Department of Cultural Studies,

IAE, NAS RA

[haykuhi.muradyan@gmail.com](mailto:haykuhi.muradyan@gmail.com)

**Nzhdeh Yeranyan**

<https://orcid.org/0000-0003-2702-1429>

Deputy Scientific Director of the History Museum of Armenia, PhD,

Yerevan State University, Department of Cultural Studies

[nzhdeh.yeranyan@ysu.am](mailto:nzhdeh.yeranyan@ysu.am)

**Hamazasp Abrahamyan**

<https://orcid.org/0009-0004-1403-0929>

Institute of Archeology and Ethnography

Museum of History of Armenia

[abrahamyanhamazasp@gmail.com](mailto:abrahamyanhamazasp@gmail.com)

**Anush Safaryan**

<https://orcid.org/0009-0008-2370-9975>

Yerevan State University, PhD Candidate

[anush.safaryan@ysu.am](mailto:anush.safaryan@ysu.am)

**Keywords:** Public cultural space, border settlements, post-Soviet period, reuse (recycling) of Soviet cultural structures, secularization of public cultural space in the Soviet era, and post-Soviet "sacralization."

---

<sup>1</sup>Հոդվածը տպագրվել է «22YR-6A010» ծածկագրով ծրագրի շրջանակում:



*The purpose of this article is to present the "Community and Public Cultural Space Transformations in Post-Soviet Armenia: A Case Study of Border Settlements" project, including its goals, objectives, and key achievements. Since the collapse of the Soviet Union, the study of transformations in public cultural spaces in Armenia's border settlements is considered an important topic in the humanities that requires multidisciplinary research. The project's goal is to explore the public and state perceptions of sacred and secular culture and their impact on changes in public cultural spaces.*

*This research focuses on the ways in which society and state institutions have reinterpreted and repurposed Soviet cultural structures—such as culture houses, rural clubs, culture palaces, creative unions, regional and community museums, art schools, etc. Secondly, the study examines new cultural processes that have emerged in Armenia since independence, such as the widespread installation of illuminated and metallic crosses, modern memorial monuments (khachkars, fountains, etc.), and post-Soviet practices aiming to transform cultural landscapes into sacred spaces.*

**«Համայնքը և հանրային մշակութային տարածքի փոխակերպումները հետխորհրդային  
Հայաստանում սահմանամերձ բնակավայրերի օրինակով» ծրագրի շուրջ**

**Հիմնաբառեր՝** հանրային մշակութային տարածք, սահմանամերձ բնակավայր,

հետխորհրդային շրջան, խորհրդային մշակութային կառույցների վերաօգտագործում (ռիսայքլինգ),  
հանրային մշակութային տարածքի խորհրդային «աշխարհկացումը» և հետխորհրդային  
«կրոնականացումը»:

Հոդվածի նպատակն է ներկայացնել «Համայնքը և հանրային մշակութային տարածքի փոխակերպումները հետխորհրդային Հայաստանում սահմանամերձ բնակավայրերի օրինակով» ծրագիրը՝ նրա նպատակը, խնդիրներն ու հիմնական ձեռքբերումները: Խորհրդային Միության փլուզումից ի վեր Հայաստանի սահմանամերձ բնակավայրերում հանրային մշակութային տարածքի փոխակերպումների ուսումնասիրությունը, կարծում ենք, հումանիտար գիտության կարևոր թեմաներից է, որը կարիք ունի բազմազիտակարգային հետազոտության: Ծրագրի խնդիրն է քննել սակրալ և աշխարհիկ մշակույթի հանրային և պետական ընկալումներն ու դրանց ազդեցությունը հանրային մշակութային տարածքների փոփոխությունների վրա:

Սույն հետազոտությունը կենտրոնանում է այն ուղիների վրա, որոնցով հասարակությունը և պետական մարմինները վերափաստավորել և վերամշակել են խորհրդային մշակութային կառույցները՝ մշակույթի տներ, գյուղական ակումբներ, մշակույթի պալատներ, ստեղծագործական միություններ, տարածաշրջանային և համայնքային թանգարաններ, արվեստի դպրոցներ և այլն: Երկրորդ, դիտարկվում են նոր մշակութային գործընթացները, որոնք ի հայտ են եկել Հայաստանում անկախությունից ի վեր, ինչպիսիք են լուսավորված և մետաղական խաչերի, ժամանակակից հուշակոթողների (խաչքարերի, աղբյուրների և այլն) լայնորեն տեղադրումը և հետխորհրդային պրակտիկաները, որոնք ձգտում են մշակութային լանդշաֆտները վերածել սրբազան տարածքի:

«Համայնքը և հանրային մշակութային տարածքի փոխակերպումները հետխորհրդային Հայաստանում  
սահմանամերձ բնակավայրերի օրինակով» ծրագրի շուրջ

Проект «Сообщество и трансформации общественного культурного пространства в постсоветской  
Армении на примере пограничных населенных пунктов»

**Ключевые слова:** общественное культурное пространство, пограничные населенные пункты, постсоветский период, повторное использование (переработка) советских культурных структур, секуляризация общественного культурного пространства в советский период и постсоветская «сакрализация».

*Целью этой статьи является представление проекта «Сообщество и трансформации общественного культурного пространства в постсоветской Армении на примере пограничных населенных пунктов», включая его цели, задачи и ключевые достижения. С момента распада Советского Союза изучение трансформаций общественных культурных пространств в пограничных поселениях Армении считается важной темой гуманитарных наук, требующей междисциплинарных исследований. Задача проекта - исследовать общественные и государственные восприятия сакральной и светской культуры и их влияние на изменения в общественных культурных пространствах.*

*Это исследование сосредоточено на путях, которыми общество и государственные органы переосмыслили и переработали советские культурные структуры, такие как дома культуры, сельские клубы, дворцы культуры, творческие союзы, региональные и муниципальные музеи, художественные школы и др. Во-вторых, рассматриваются новые культурные процессы, которые возникли в Армении после обретения независимости, такие как широкое размещение освещенных и металлических крестов, современных памятников (хачкаров, источников и др.) и постсоветская практика, стремящаяся преобразовать культурные ландшафты в священные пространства.*

\* \* \*

**Ներածություն:** Խորհրդային և հետխորհրդային հայաստանյան հանրային տարածքին վերաբերող գիտական հետազոտությունները սակավ են: Մասնավորապես կարելի է դիտարկել մշակույթի առանձին, կոնկրետ դրսևորման մասին հետազոտություններ, որոնք այս կամ այն կերպ կապվում են հանրային տարածքի հետխորհրդային տրանսֆորմացիաների հետ [Խաչատուրյան Լ., Պետրոսյան Հ., Անտոնյան Յու., Շագոյան Գ., Մարության Հ., Աթանեսյան Գ. և այլոք], սովետական առօրեականության մասին աշխատանքներ [Գաբրիելյան Մ., Թադևոսյան Ա., Թորոսյան Մ. և այլոք], սովետական պետական գաղափարախոսության վերլուծություններ [Բայադյան Հ.]: Սակայն ընդգրկուն, ընդհանրական հետազոտություն, որը ներկայացնի հետսովետական իրողությունները և դրանց ազդեցությունը հանրային մշակութային տարածքի վերակազմակերպման վրա՝ բացակայում են:

Հանրային մշակութային տարածքների ուսումնասիրումը կապվում է մշակութային լանդշաֆտի տեսությունների հետ: Մշակութային լանդշաֆտի ուսումնասիրության թեման վերջերս ավելի շատ է ի հայտ գալիս մարդաբանական հետաքրքրությունների շրջանակում: Հետազոտողներն իրենց դաշտային փորձից հասկացել են, թե ինչպես են հանրային և սոցիալական արժեքները ձևավորում հանրային տարածք և կոնսերվացնում պատմական, սոցիալական և անհատական հիշողությունները [Pamela J. Stewart and Andrew Strathern, 2003]: Մշակութային լանդշաֆտի փոփոխությունները կապվում են նման ընկալումների՝ ժամանակի ընթացքում աստիճանաբար կամ կտրուկ փոփոխությունների հետ, այնպես որ լանդշաֆտը դառնում է պատմության ինչպես կոնսերվացման, այնպես էլ հանրային ընկալումների զարգացման դինամիկայի վավերացման միջոց [Bret Wallach, 2005]: Այս գաղափարը հատկապես արդյունավետ է անցումային հասարակությունների ինքնությունների և հիշողության ուսումնասիրությունների համար: Համակարգային փոփոխությունները, հեղափոխությունները, պատերազմները անմիջապես ազդում են հանրային ընկալումների և դրա հետևանքով լանդշաֆտի փոփոխությունների վրա [O. Lavrenova, 2019]: Հայաստանի ժամանակակից մշակութային լանդշաֆտի ուսումնասիրությունը կապվում է ինչպես խորհրդայինից անցումը անկախության շրջանին, այնպես էլ արցախյան հարցի, երեք պատերազմների, սոցիալական և քաղաքական բարդ իրավիճակի հետ և դրանց արտացոլումը գտնում ենք մշակութային լանդշաֆտի վրա:

#### **Հետազոտությունը կենտրոնանում է՝**

ա. մարզային և շրջանային թանգարանների, հուշ թանգարանների հետխորհրդային գործունեության հետազոտության, համայնքի հետ հաղորդակցման ձևերի, ունեցած դերակտարության վրա:

բ. Մշակույթի տները, մշակույթի պալատները որպես սովետական գաղափարախոսության կրիչներ ինչպես են հետխորհրդային տարածքում վերաօգտագործվում և վերաիմաստավորվում, ինչպես նաև դիտարկվել են սահմանային բնակավայրերում այս գործընթացների արտահայտման առանձնահատկությունները:

գ. Խորհրդային և հետխորհրդային շրջանում հուշարձանային լանդշաֆտի փոփոխությունների, մշակութային լանդշաֆտի/հանրային տարածքի ձևավորման վրա հետխորհրդային մշակութային գործընթացների և Արցախյան պատերազմների ազդեցության վրա («հուշարձանացումը», հուշաղբյուրների կառուցումը և մասնավորապես կրոնականացումը («խաչացումն» ու «խաչքարայնացումը»)):

դ. Հնագիտական հուշարձանների, սրբավայրերի, խորհրդային և հետխորհրդային մշակութային օբյեկտների ազդեցությունների համեմատությունները համայնքի մշակութային տարածքի վրա:

#### **Հետազոտության մեթոդաբանությունը.**

Թեմայի հետազոտության շրջանակում օգտագործվել են սոցիալական և մշակութային մարդաբանության, քարտեզագրության և հնագիտության հետազոտական մեթոդները:

Հետազոտության մեթոդաբանությունը ներառում է որակական հարցումներ՝ կիսաձևայնացված հարցաշարերի միջոցով, մասնակցային և կիսամասնակցային դիտարկման մեթոդը, արխիվային փաստաթղթերի վերլուծության մեթոդը և այլն: Հատկապես կարևորել ենք մշակութային քարտեզների ստեղծման մեթոդը, որի միջոցով փորձել ենք քարտեզագրել սահմանային

**«Համայնքը և հանրային մշակութային տարածքի փոխակերպումները հետխորհրդային Հայաստանում սահմանամերձ բնակավայրերի օրինակով» ծրագրի շուրջ**

բնակավայրերի մշակութային լանդշաֆտը: Օգտվել ենք մարզային արխիվային նյութերից և Հայաստանի ազգային արխիվի փաստաթղթերից: Հետազոտությունը ընդգրկել է Սյունիքի, Գեղարքունիքի և Տավուշի շուրջ քառասուն սահմանային բնակավայրերում (Սյունիքի մարզում՝ Գորիս, Սիսիան, Կապան, Մեղրի, Քարահունջ, Խնձորեսկ, Լեռնաձոր, Շինուհայր, Վերիշեն, Տավուշի մարզում՝ Բերդ, Չինարի, Տավուշ, Նոյեմբերյան, Կողբ, Կոթի, Բարեկամավան, Բերդավան, Իջևան, Վազաշեն, Պառավաքար, Բերքաբեր, Աճարկուտ, Այգեհովիտ, Ոսկեվան, Կիրանց, Ոսկեպար, Բաղանիս, Գեղարքունիքի մարզում՝ Ճամբարակ, Վարդենիս, Մարտունի, Վաղաշեն, Թթուջուր, Գետիկ, Մեծ Մասրիկ, Սոթք, Կալավան): Հաշվառվել և քարտեզագրվել են նյութական և ոչ նյութական ժառանգության միավորները:

**Դաշտային հետազոտություն.**

Ա. Հետազոտության ընթացքում կազմակերպվել են գիտարշավներ Սյունիքի, Տավուշի և Գեղարքունիքի մարզերի սահմանային բնակավայրերում: Հետազոտության առաջին տարում դաշտային աշխատանքները կազմակերպվել են Սյունիքի և Տավուշի սահմանային բնակավայրերում: Դաշտային աշխատանքները առավելապես կրել են հետախուզական բնույթ, կարճատև տևողությամբ՝ խմբի բոլոր անդամների և ղեկավարի մասնակցությամբ: Առաջին դաշտային աշխատանքը կազմակերպվել է Սյունիքի մարզի Կապան, Գորիս, քաղաքներում և հարակից համայնքներում՝ Խնձորեսկ, Քարահունջ: Երկրորդ հետախուզական բնույթի դաշտային աշխատանքները կազմակերպվել են Տավուշի մարզի Իջևան, Բերդ, Նոյեմբերյան քաղաքներում, Բերդավան, Կողբ, Կոթի, Բարեկամավան, Տավուշ, Չինարի համայնքներում: Երրորդ՝ եռօրյա դաշտային աշխատանքը եղել է Սիսիան քաղաքում: Դաշտային աշխատանքները կազմակերպվել են խորացված հարցազրույցների, մասնակցային և կիսամասնակցային դիտարկումների մեթոդներով: Երկրորդ տարում դաշտային աշխատանքները շարունակվել են Սյունիքի և Տավուշի (Մեղրի, Պառավաքար, Վազաշեն, Այգեհովիտ) սահմանային բնակավայրերում, ինչպես նաև հետախուզական աշխատանքներ է իրականացրել Գեղարքունիքի մարզի սահմանամերձ բնակավայրերում: Գեղարքունիքի մարզում ուսումնասիրվել են Ճամբարակ քաղաքը, Մարտունի, Գետիկ և Թթուջուր գյուղերը: Դաշտային աշխատանքները երկրորդ տարում էապես գերակշռել են՝ համեմատած առաջին տարվա հետախուզական աշխատանքների: Հետազոտված բնակավայրերի բոլոր քարտեզները ներկայացված են հոդվածի հավելվածում:

Բ. Խմբի անդամները և ղեկավարը գիտական գրականության և համապատասխան մամուլի հետազոտություն են կատարել՝ հատկապես դիտարկելով ծրագրի տեսանկյունից հետաքրքրական մամուլի հետազոտումը: Ուսումնասիրվել են հետազոտված համայնքների վերաբերյալ արխիվային նյութեր և գիտական հրատարակումներ: Մասնավորապես դիտարկվել ենք «Կարմիր Զանգեզուր», «Խորհրդային Զանգեզուր», «Կարմիր Ռաշպար» ամսագրերը և այլն:

**Գ. Գիտաժողովների, սեմինարների և աշխատառանների մասնակցություն**

Ծրագրի շրջանակներում 2024 թ.-ի ապրիլի 18-19-ին կազմակերպվել ենք երկօրյա գիտաժողով՝ «Պատերազմը, սահմանը և մշակույթը» խորագրով:

Արցախյան պատերազմը, դրա հետևանքով առաջացած սահմանային իրավիճակը և հատկապես մշակութային ժառանգության պահպանության մարտահրավերները հաշվի առնելով՝ մենք որոշեցինք ԵՊՀ պատմության ֆակուլտետում կազմակերպել «Պատերազմը, սահմանը և մշակույթը» խորագրով միջազգային գիտաժողով, որի ընթացքում ներկայացրեցինք նաև մեր հետազոտության արդյունքները և ամփոփեցինք երկու տարվա հետազոտության դաշտը:

Գիտաժողովի նպատակն էր համախմբել ՀՀ սահմանային համայնքների մշակութային ժառանգության պահպանությամբ և հանրայնացմամբ զբաղվող հետազոտողներին, քննարկել սահմանային բնակավայրերում մշակութային, կրոնական և կրթական պրակտիկաների նոր դրսևորումները, մշակութային ժառանգության պահպանության արդի մարտահրավերները և խնդիրները:

Գիտաժողովի հիմնական ուղղություններն են դիտարկվել՝

- ժամանակակից սոցիալ-մշակութային գործընթացները սահմանին,
- սահմանային ժառանգության պահպանության խնդիրները,
- կրթությունը և կրթական նոր փոփոխությունները սահմանին,
- սահմանային բնակավայրերի մշակութային և կրոնական լանդշաֆտի փոփոխությունները,
- սահմանային բնակավայրերի տնտեսական գործընթացների փոխակերպումները,
- պատերազմի ազդեցությունը սահմանային բնակավայրերի առօրեականության վրա:

Գիտաժողովին զեկուցումներով հանդես եկան շուրջ չորս տասնյակ հետազոտողներ, որոնք իրենց հետազոտություններով կիսվեցին գիտական հանրության հետ: Գիտաժողովի մասնակիցների շարքում էին ինչպես հայաստանյան, այնպես էլ միջազգային հետազոտողներ: Գիտաժողովի շրջանակում կայացավ երկու կարևոր գրքերի շնորհանդես: Առաջին գիրքը՝ Յուլիա Անտոնյան, Հայկուհի Մուրադյան, Լիլիթ Գաբրիելյան, Անուշ Սաֆարյան, «Կայսերականի և հետկայսերականի միջև. հայաստանյան կրոնական լանդշաֆտի զարգացումները XX դարում, Կոլեկտիվ մենագրություն, ԵՊՀ հրատ., 2023, 276 էջ, Հայաստան: Գրքի հեղինակները ներկայացրին մենագրության մեջ տեղ գտած հոդվածները և հետազոտության հիմնական ձեռքբերումները: Երկրորդ գիրքը Հարություն Խաչատուրյանի և Ս. Լ. Դորֆմանի «Հուշարձանները և ինքնությունները Կովկասում. Ղարաբաղը, Նախիջևանը և Ադրբեջանը ժամանակակից աշխարհաքաղաքական հակամարտության համատեքստում» գիրքն է, որը ներկայացնում էր մի շարք հոդվածների ժողովածու՝ նվիրված Արցախի, Նախիջևանի մշակութային, պատմական և քաղաքական խնդիրներին:

Գիտաժողովը լուսաբանվել է ինչպես ԵՊՀ լրատվական միջոցով, այնպես էլ մի քանի ԶԼՄ-ների միջոցով: Ստորև ներկայացնում ենք այդ հրապարակումներից մի քանի հղումներ՝

- Գիտաժողով՝ նվիրված ՀՀ սահմանային բնակավայրերի մշակութային լանդշաֆտի քննությանը // Ամբողջական հոդվածը կարող եք կարդալ այս հասցեով՝ [Հոդված](#)
- «Պատերազմը, սահմանը և մշակույթը» գիտաժողով ԵՊՀ-ում [Մանրամասները](#)
- Մշակութային ժառանգությունը, անկախ գտնվելու վայրից, պետք է պահպանվի. գիտաժողով՝ ԵՊՀ-ում [Տեսանյութ](#)
- Կրթության և գիտության ռազմավարություն, հաղորդաշար Շողակաթ հեռուստաալիքով, քննարկվել է գիտաժողովի արդյունքները [Տեսնել այստեղ](#)

**Հրատարակություններ.**

**«Համայնքը և հանրային մշակութային տարածքի փոխակերպումները հետխորհրդային Հայաստանում սահմանամերձ բնակավայրերի օրինակով» ծրագրի շուրջ**

Ծրագրի հետազոտության արդյունքները հարուստ նյութ են դարձել խմբի բոլոր հետազոտողների կողմից՝ բազմակողմանիորեն հետազոտել մշակութային լանդշաֆտի փոխակերպումները, ուսումնասիրել մի շարք հետաքրքիր կարևոր գործընթացներ, որոնք ազդել են մշակութային լանդշաֆտի փոխակերպումների վրա: Այդ հավաքած նյութը համահեղինակությամբ և անհատական հոդվածների տեսքով տպագրվել են Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից ընդունվող պարբերականներում և հանդեսներում, ինչպես նաև երեք հոդված սկոպուս շտեմարաններում, որոնցից մեկը արդեն տպագրված է, իսկ երկուսը գտնվում են խմբագրությունում:

**Ե. Ծրագրի շրջանակներում պատրաստվել և գիտական հրատարակության է ներկայացվել հետևյալ հոդվածները՝**

- Մուրադյան Հ., Երանյան Ն., Աբրահամյան Հ., Ազգային ինքնության կառուցումը և Խորհրդային մշակութային քաղաքականությունը. ըստ Հայաստանի պատմության թանգարանի որոշ արխիվային նամակների, Աշխատություններ Հայաստանի պատմության թանգարանի, Երևան, 11 (1), 2023, էջ 230-242, 284-293, DOI:10.56653/18290361-2023.11-230:
- Մուրադյան Հ., Երանյան Ն., Թանգարանը և Արցախյան 44-օրյա պատերազմը, Պատմություն և մշակույթ հայագիտական հանդես, 1(19), Երևան, 2023, էջ 298-308:
- Muradyan H., Yeranyan N., "Museum Losses amidst the 44-Day Artsakh War: A Reflection on the Displaced Artifacts and Collections", Analytical Bulletin of Armenian and Regional Studies, Yerevan, 2024, 19, p. 7-24. DOI: 10.56673/18294502-hmn2024.19.2:
- Anush Safaryan, Haykuhi Muradyan // The spring and the khachkar (monuments of the Second World War and formation of new khachkars in Soviet and post-Soviet context) / Multidisciplinary Reviews, 2024, Vol. 7 (2024), 1-8.
- Անուշ Սաֆարյան // Ամենահաղթ զենքի մասին հայկական պատկերացումները և Արցախի ժամանակակից խաչքարային մշակույթը / Պատմություն և մշակույթ, 2023, 19 N, 213-223
- Նժդեհ Երանյան – Անհասանելի ժառանգության մատչելիության հնարավորությունները. միջազգային փորձը և իրավական կարգավորումները, Պատմություն և մշակույթ հայագիտական հանդես, 2(19), Երևան, 2024
- Համազասպ Աբրահամյան – Հուշարձանը սահմանին. պահպանությունը և մատչելիությունը, Պատմություն և մշակույթ հայագիտական հանդես, 2(19), Երևան, 2024
- Անուշ Սաֆարյան – Սահմանը և նշանը, Պատմություն և մշակույթ հայագիտական հանդես, 2(19), Երևան, 2024

**Զ. Միջազգային համագործակցություն.**

Միջազգային գիտաժողովների մասնակցությունը հնարավորություն ստեղծեց ծրագրի մասին տեղեկությունը տարածել և համագործակցության նոր հեռանկարներ գծել միջազգային գործընկերների հետ, հատկապես կարևորում ենք Բեռլինի Արևելյան հետազոտությունների կենտրոնի հետ սկսված համագործակցությունը և Լեհաստանի Պոզնանի պետական համալսարանի մարդաբանության բաժնի հետ սկսված կապերը: Մեր հետազոտական խմբի

ձեռքբերումների մեկը կարող ենք համարել խմբի անդամ Նժդեհ Երանյանի մասնագիտական այցելությունը Քորնել համալսարան, որտեղ նրան հյուրընկալել է ծրագրի արտաքին խորհրդատու Լորի Խաչատուրյանը: Ծրագրի շրջանակներում Նժդեհ Երանյանը ծանոթացել է Քորնել համալսարանի հետազոտական և գիտական գործունեությանը, նոր մեթոդաբանությանը և հարուստ գրադարանային ֆոնդին: Նրա այցելությունը Քորնել մեծապես կնպաստի հետազայում Քորնել համալսարանի հետ համագործակցության ընդլայնմանը, համատեղ հնարավոր ծրագրերի և գիտահետազոտական գործունեության իրականացմանը:

Կարևոր է նշել նաև, որ Լորի Խաչատուրյանը այս ծրագրի շրջանակներում հյուրընկալվել է ԵՊՀ և ամռանը մեզ հետ մասնակցել է Տավուշում կազմակերպված դաշտային աշխատանքներին: Երկշաբաթյա դաշտային հետազոտությունը հետազոտական հմտությունների, փորձի և փորձառության փոխանակման լավ առիթ էր մեր խմբի բոլոր անդամների համար:

**Եզրակացություններ:** Մինչխորհրդային շրջանի հայաստանյան հուշարձանային լանդշաֆտը սերտորեն կապված էր կրոնականության վիզուալ դրսևորումներին (վանքեր, եկեղեցիներ, մատուռներ, խաչքարեր, կրոնական բնույթի այլ հուշարձաններ): Սակայն խորհրդային կրոնական անհանդուրժողականության կամ «մարտնչող աթեիզմի» շրջանում տեղի ունեցավ մշակութային լանդշաֆտի փոխակերպում, ինչը ենթադրում էր կրոնական սիմվոլների՝ եկեղեցիների, մատուռների, խաչքարերի ֆիզիկական ոչնչացում կամ անտեսում և դրանք լանդշաֆտային նոր սիմվոլներով փոխարինում [Անտոնյան, Մուրադյան 2023, Անտոնյան 2018]:

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո կոմունիստական կուսակցությունն ու կառավարությունը լուրջ ձեռնարկումներ կատարեցին արդեն Սովետական Հայաստանում նոր հուշարձաններ կառուցելու ուղղությամբ, ինչը իրականացվում էր թե՛ գաղափարախոսական քարոզչության, թե՛ նոր «ազգային ու սոցիալիստական» մշակութային լանդշաֆտի կառուցման շրջանակում [Աբրահամյան 2023, Шагоян 2022]: Հարկ է նկատել, որ XVII դարի վերջից՝ խաչքարային մշակույթի անկումից հետո, Հայաստանում XVIII-XIX դարերում կոթողային մշակույթը ակնհայտ անկում է ապրել [Պետրոսյան 2008]: Միաժամանակ ցարական կառավարությունը ոչ միայն չէր խրախուսում, այլև ամեն կերպ արգելակում էր փոքր ազգերի, այդ թվում՝ հայ ժողովրդի, մշակույթի ականավոր գործիչների պատվին հուշարձանների կառուցումը [Սարգսյան 1967]:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո հուշարձանային նոր քաղաքականությունը փորձում էր մշակութային լանդշաֆտը վերաձևավորել հեղափոխությանը, նրա առաջնորդներին ու մարտիկներին առնչվող խորհրդանիշներով՝ արձաններով, քանդակներով, մշակութային, քաղաքական և գաղափարային նշանակություն ունեցող կառույցներով [Սարգսյան 1959]:

Հայրենական պատերազմն իր շտկումները բերեց, և պատերազմի տարիներին այդ քաղաքականությունը կարծես թե փոխվեց: Խորհրդային իշխանությունների կողմից մեղմվեց կրոնի ու կրոնական ինստիտուտների դեմ վարվող քաղաքականությունը, ինչպես նաև նոր ազգային մշակույթների կառուցակցման գործընթացում գործիքավորվեց կրոնամշակութային ժառանգությունը [Անտոնյան, Մուրադյան 2023]: Այսպիսով, կարելի է ասել աստիճանաբար հնարավորություն էր ստեղծվում «կրոնական» մոտիվներն ու խորհրդանշանները պարունակող հուշարձանաշինության համար:

**«Համայնքը և հանրային մշակութային տարածքի փոխակերպումները հետխորհրդային Հայաստանում սահմանամերձ բնակավայրերի օրինակով» ծրագրի շուրջ**

Խորհրդային մշակութային քաղաքականության պատմության մեջ 1950-1960-ական թվականները առանձնանում են որպես ազատականացման, մշակութային վերելքի ու ազգային «զարթոնքի» ժամանակաշրջան [Filtzer 1993, Մուրադյան 2018]: «Ձնհալի» տարիներին խորհրդահայ մշակութային քաղաքականությունը ընթացավ քաղաքականապես համեմատաբար ազատ միջավայրում, ինչը նպաստեց ազգային գաղափարախոսության, պատմության ու մշակութային ժառանգության արդիականացմանը, նրա առանձին համալիրների ներառմանը իրական մշակութային գործընթացներում: Այս ամենն ընթանում էր փոխկապակցված գաղափարական որոշակի «պայմանավորվածությունների» ու ադմինիստրատիվ մեխանիզմների միջոցով [Lehmann 2015, Thomas F. Rogers 1968]: Այդ առաջընթացի ու ազատականացման կարևոր արդյունքներից մեկն էլ զանազան կոթողային հուշարձանների, առաջին հերթին՝ խաչքարերի՝ որպես ժամանակակից հանրային հուշարձանների երևան գալն էր: Սակայն թե ինչպես էր տեղի ունենում այդ գործընթացը մինչև հիմա մնում է չուսումնասիրված, թեև որպես հայ միջնադարյան մշակութային երևույթի՝ խաչքարերին նվիրված էին մի շարք հիմնարար աշխատություններ [Բարխուդարյան 1963, Իսրայելյան 1982, Շահինյան 1984, Սահակյան 1987, Պետրոսյան 2008]: Ինչպե՞ս ստացվեց, որ միջնադարյան քրիստոնեական-ժողովրդական իմաստաբանություն ունեցող կոթողը դարձել էր խորհրդային կիրառական արվեստի օբյեկտ ու հայաստանյան հանրային տարածության խորհրդանշաններից մեկը:

Հայրենական պատերազմի զոհերին նվիրված հուշարձանաշինությունը, որ սկիզբ էր առել դեռևս Հայրենական պատերազմի ընթացքում, մեծ թափ առավ հատկապես պատերազմից հետո: Օրեցօր ծավալվող այդ պրակտիկան, ըստ էության, առաջադրում էր ճարտարապետական ու քանդակային համապատասխան ձևերի ընտրության հարցը: Այդ հուշարձանների կառուցումը երբեք հարթ, կենտրոնացված գործընթաց չի եղել. դրանք չեն առաջացել միայն պետական նախաձեռնությունների արդյունքում [Арутюнян, Оганесян 1952, Gabowitsch 2019, Шагоян 2022]: Եվ եթե որոշ դեպքերում ընդօրինակվում էին մոտավոր բրգաձև ու գագաթին աստղ կրող հուշարձանները, ապա հայաստանյան իրականության մեջ հիմնական ծավալաստեղծ նախօրինակի դերակատարում ստացան միջնադարյան փոքրածավալ կառույցները, հատկապես աղբյուրները: Դրա հիմքում միջնադարյան աղբյուրի ու խաչքարի (հատկապես որմնափակ) ծավալային և հայտնի չափով քանդակային ընդհանրություն էր: Այս առումով մեր հիմնական խնդիրներից մեկն էլ աղբյուրի և խաչքարի ընդհանրությունների քննությունն է, թե ինչպես միջնադարյան կառույցների ճարտարապետական տրամաբանությամբ ստեղծված հուշարձանները նախահիմք դարձան նոր ժամանակների խաչքարերի ծավալային ու քանդակային լուծման համար:

Այս ամենը հաշվի առնելով՝ կարելի է ենթադրել, որ Հայրենական պատերազմի հուշարձանաշինության առաջին ալիքը հաճախ ընդօրինակել է միջնադարյան աղբյուրի ձևերը՝ դրան հավելելով որմնափակ խաչքարի ծավալային նմանությունն ու պատկերագրական մանրամասները: Սակայն ինչպե՞ս հուշաղբյուրը դարձավ խաչքար:

Արդեն հետխորհրդային շրջանում խաչքարը դարձավ հայկական հանրային ու մասնավոր տարածքների լանդշաֆտի ամենահաճախ հանդիպող բաղադրամաս: Հարկ է նկատել, որ դասական ձևերի հետ միասին ժամանակակից խաչքարային մշակույթը լայնորեն օգտվել է Արցախյան ազատագրական պայքարի գաղափարաբանությունից ու գործընթացից, որտեղ ակտիվորեն շահագործվում էր կրոնական, մասնավորապես քրիստոնեական ինքնության գործոնը [Tchilingirian 2007, Խառատյան 2007]: Այնպես որ անկախության տարիների խաչքարային մշակույթի համատարած զարգացումը միանշանակ ոչ միայն կրոնական զարթոնքի, այլ նաև Արցախյան ազատագրական պայքարի հուշարձանային վիզուալացման գործընթացների արդյունք է, ինչը պայմանավորել է այդ խաչքարերի կանգնեցման ն՝ տեղը, ն՝ կազմակերպումը, ն՝ հատկապես հորինվածքային առանձնահատկությունները:

#### Հետազոտված համայնքների ցանկը

| Մարզ          | Համայնքներ                                                                                                                                     |
|---------------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| Սյունիքի մարզ | Սիսիան, Գորիս, Խնձորեսկ, Քարահունջ, Կապան, Մեղրի                                                                                               |
| Տավուշի մարզ  | Նոյեմբերյան, Կողբ, Բերդավան, Բարեկամավան, Բերքաբեր, Կոթի, Ոսկեվան, Բաղանիս, Կիրանց, Բերդ, Տավուշ, Չինարի, Պառավաքար, Իջևան, Վազաշեն, Այգեհովիտ |
| Գեղարքունիք   | Ճամբարակ, Վաղաշեն, Վարդենիս, Սոթք, Մեծ Մասրիկ, Կալավան, գ. Մարտունի, Գետիկ, Թթուջուր, Վահան                                                    |

#### Գրականության ցանկ

**Ahearne J. 2004**, *Between Cultural Theory and Policy: The cultural policy thinking of Pierre Bourdieu, Michel de Certeau and Régis Debray*. London: Centre for Cultural Policy Studies, University of Warwick, vol. 7, 148 p.

**Antonyan Y. 2014**, *Church, God and Society: Toward the Anthropology of Church Construction in Armenia*. Armenian Christianity Today, Ashgate, pp. 35-56.

**Antonyan Y. 2021**, *Worship of Shrines in Armenia, Between Soviet and Post-Soviet Modernities*. Journal of Religion in Europe, 14, 367-391.

**Bennett T. 2000**, *Intellectuals, Culture, Policy: The Technical, the Practical and the Critical*. Papers in Social and Cultural Research, Milton Keynes: Faculty of Social Sciences, The Open University, No. 2, pp. 357-374.

**Bennett T. 2010**, *Introduction: cultural capital and cultural policy*. Cultural Trends, 13(2), pp. 7-14.

**Bennett T., & Snickars, F. 2001**, *Cultural Policy, Issues of Culture and Governance*. Culture, Society and Market, Sweden, The Bank of Sweden Tercentenary Fund and the Swedish National Council for Cultural Affairs, pp. 13-28.

**Czepczyński M. 2008**, *Cultural Landscapes of Post-Socialist Cities: Representation of Powers and Needs*. England.

«Համայնքը և հանրային մշակութային տարածքի փոխակերպումները հետխորհրդային Հայաստանում սահմանափակ բնակավայրերի օրինակով» ծրագրի շուրջ

Edensor T. 2005, *The ghosts of industrial ruins: Ordering and disordering memory in excessive space*. Environ. Plan. D Soc. Space, 23, 829–849.

Gabrielyan M. 2007, *Ethnological Research Aspects of "Soviet Heritage"*. The Issues of Armenian Archaeology and Ethnography -3, Yerevan.

Gabrielyan M. 2007, *Past in the Present: Effect of "Soviet" on Armenian Society*. Materials of First International Conference of Caucasologists, Tbilisi.

Petrosyan H., & Sweezy, N. 2001, *Armenian Folk Arts, Culture and Identity*. Bloomington and Indianapolis: Indiana Univ. Press, pp. 3-22.

Mitchell J. P. 2020, *How Landscapes Remember*. Material Religion: The Journal of Objects, Art and Belief, University of Sussex, pp. 233-251.

Khatchadourian L. 2022, *Life Extempore: Trials of Ruination in the Twilight Zone of Soviet Industry*. Cultural Anthropology, 37(2), pp. 317-348.

Lavrenova O. 2019, *Spaces and Meanings: Semantics of the Cultural Landscape*. Springer Nature Switzerland.

Marutyan H. 2020, *The Manifestations of Cemetery Culture in Armenian Monuments and Memorials*. Handes Amsorya (in Armenian).

Stewart P. J., & Strathern A. 2003, *Landscape, Memory and History: Anthropological Perspectives*. London.

Shagoyan G. 2007, *City as a Paradise and the Paradise as a City (Perception of Giumri before and after the Earthquake)*. In The Historical-Cultural Heritage of Shirak: Materials of the VII National Scientific Conference, Giumri, pp. 170-174 (in Russian).

Shagoyan G. 2008, *Memorializing the 1988 Earthquake in Armenia*. In Figuring out the South Caucasus: Societies and Environment. Collection of Papers, Tbilisi: Heinrich Böll Stifting, pp. 146-166 (in Russian).

Smith A. 1999, *Myths and Memories of the Nation*. Oxford University Press, 296 p.

Hirsch, E., & O'Hanlon, M. (Eds.). (1995). *The Anthropology of Landscape: Perspectives on Place and Space*. Clarendon Press, Oxford.

Wallach B. 2005, *Understanding the Cultural Landscape*. The Guilford Press, New York.

Yeranyan N., & Muradyan, H. 2021, *Museum and Communities in Situation of War (Exemplified by Artsakh Museums)*. Local Communities, Cultural Heritage, and Museums, Bulgaria, pp. 25-34, 372-379.

Բայադյան Հ. 2020, *Երևակայելով անցյալը: խորհրդահայ արդիականության պատումները*. Երևան: 288 էջ:

Թադևոսյան Ա. 2003, *Մշակութային ինքնության պահպանման և վերարտադրության հիմնահարցը ազգային անվտանգության տեսանկյունից*. Երևան: Նորավանք, 73 էջ:

Թորոսյան Մ. 2016, *Մշակույթ-առօրեականություն փոխառնչությունները հայաստանյան արդի հանրային ընկալումներում*. Կանթեղ, 3, pp. 73-86.

**Մուրադյան Հ. 2020,** «Ստեղծագործական միություններ» ձևավորումը, գործունեությունը և փոխակերպումները Հայաստանի խորհրդային և անկախության շրջանում. Տարածաշրջան և աշխարհ, 2, pp. 126-134.

**Մուրադյան Հ. 2018,** Խորհրդային Հայաստանի մշակութային քաղաքականությունը «ձնհալի» տարիներին. Պատմություն և մշակույթ, pp. 376-383.

**Մուրադյան Հ. 2017,** Մշակութային քաղաքականության գործիքային տեսությունը և հայաստանյան իրականությունը. Պատմություն և մշակույթ, pp. 441-447.

**Մուրադյան Հ. 2017,** Մշակույթի ոլորտի օրենսդրական դաշտի կարգավորման խնդիրներն արդի Հայաստանում. In Զեկուցումների ժողովածու, dedicated to the 125th anniversary of R. Drambyan, pp. 182-188.

**Մուրադյան Հ. 2019,** Մշակույթի տները խորհրդային և ետխորհրդային Հայաստանում. Ժառանգականությունը, գործառության և իմաստային փոխակերպումները. Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ, 3, pp. 194-203.

**Պետրոսյան Հ. 2017,** Թանգարանը կոնֆլիկտի գոտում: Արցախի Տիգրանակերտի հնագիտական թանգարանը. In Զեկուցումների ժողովածու, dedicated to the 125th anniversary of R. Drambyan, pp. 114-124.

**Սաֆարյան Ա. 2021,** Ավանդույթը և վարպետը, Արցախի արդի խաչքարային մշակույթն ըստ Ռոբերտ Ասկարյանի ստեղծագործությունների. ՎԷՄ, 3.

Հավելված 1

Գիտաժողովի մասնակցություն

#### Մուրադյան Հայկուհի

- **Agitprop and the Sovietization of “National Heritage” in the 1930s, *The Soviet Experience in Armenia and Its Legacy*, Academic Conference, Michigan University, USA, 28-30 October 2022.**
- **Agitprop and the Sovietization of “National Heritage” in the 1930s, Public lecture, Library of Congress, New York, 1-2 November 2022.**
- **The formation of Soviet national culture: State as a dictator, Public lecture, American University of Armenia, 20 April 2023.**
- **Museum and the 44-day Artsakh war, *The 16th Biennial Meeting of the International Association of Genocide Scholars "Authoritarianism & Genocide: Narratives of Exclusion"*, Barcelona, Spain, 10-14 July 2023.**
- **Constructing the Soviet image of a city in the 1960s and the post-Soviet transformations: Political and cultural aspects. The case of Goris, Armenia, *Relicts of the Ancient Régime – Socialist & Imperial Legacies and the City*, Leibniz-Zentrum Moderner Orient, Berlin, 13-15 September 2023.**
- **Transformation of public space in post-Soviet Armenia: The example of border settlements, *Compendium, International Cultural Policy Conference*, Valletta, Malta, 4-7 October 2023.**
- **Armenian Cultural Heritage – Identification, Documentation, Handling, International Workshop, Tsaghkunk, Armenia, 26-28 October 2023.**
- **"Velvet" for or Against Culture: Institutional Transformation of Cultural Policy in Post-Revolutionary Armenia, *ART AS A REFLECTION OF SOCIETY: Role of Art in Shaping Culture***

«Համայնքը և հանրային մշակութային տարածքի փոխակերպումները հետխորհրդային Հայաստանում սահմանամերձ բնակավայրերի օրինակով» ծրագրի շուրջ

*and Sparking Social Change (ARS-UM 23)*, International Conference, Podgorica, Montenegro, 5-6 December 2023.

- **War, Border, and Culture**, *YSU Conference*, Yerevan, Armenia, 11-12 April 2024.
- **The Soviet “Palace of Culture” and “House of Culture” as Centers of Leisure: Soviet and National Discourse (The Case of Soviet Armenia)**, *Leisure in Central and Eastern Europe: A Century of Political, Social, and Cultural Crises*, The Leibniz Institute for the History and Culture of Eastern Europe (GWZO), Leipzig, Germany, 23-25 May 2024.
- **Challenges in Protecting Cultural Heritage and the Role of International Organizations: The Case of Artsakh**, *International Perspectives on the Protection of Cultural Heritage*, European University of Armenia & European Research Center of Italy, 27 June 2024.
- **Cultural Heritage Studies**, *Open World Program, US Embassy of Armenia*, Washington DC, Santa Fe, 10-22 July 2024.
- **Refugee Heritage: Monuments, Museums, and Private Collections in a New Reality**, *Issues of Historical and Cultural Heritage in the Post-Soviet Period*, Geghard Scientific Analytical Foundation, Yerevan, Armenia, 29-30 August 2024.
- **International Conference on Cultural Policy "Compendium"**, Montenegro, 26-27 September 2024.
- **Հայագիտության արդի խնդիրները և զարգացման հեռանկարները** (ԵՊՀ Պատմության ֆակուլտետի հիմնադրման 105-ամյակին նվիրված), ԵՊՀ, Երևան, Հայաստան, 9-11 October 2024.
- **12th International Scientific Conference "Caucasus of the 21st Century"**, Tbilisi, Georgia, 28 October 2024.
- **“Refugee Heritage”: Legal and Socio-Cultural Dimensions of the Displacement of Movable Cultural Heritage of the Nagorno-Karabakh Armenians**, *Unearthing, Unseeing: Archaeology, Heritage, and Forensics in the Shadow of State Violence*, Cornell Institute of Archaeology, Cornell, USA, 1-2 November 2024.

---

## Նժդեհ Երանյան

- **Քաղաքի խորհրդային կերպարի կառուցումը 1960-ական թթ.-ին. Քաղաքական և մշակութային ասպեկտները (Գորիսի օրինակը)** (Համատեղ զեկույց Հ. Սուրադյանի հետ), *Խորհրդային փորձառությունն ու ժառանգությունը Հայաստանում 2*, Երևան, 13-15 հունիս 2023.
- **Հնագիտությունը և ազգայնականությունը (Զորաց քարերի օրինակը)**, *Համաշխարհայնացումը և սոցիալ-մշակութային արդի գործընթացները Հայաստանում*, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ, Երևան, 18-19 հոկտեմբեր 2023.

- Անհասանելի ժառանգության մատչելիության հնարավորությունները. Միջազգային փորձը և հայ-ադրբեջանական կոնֆլիկտը, *Պատերազմը, սահմանը և մշակույթը*, ԵՊՀ, Երևան, 18-19 ապրիլ 2024.
- Թանգարանը սահմանին. Սահմանամերձ թանգարանների մարտահրավերները հետպատերազմական Հայաստանում, *Մշակութային ժառանգության պահպանության ազգային համաժողով*, Սմիթսոնյան ինստիտուտ, Լոս Անջելես, 23-26 սեպտեմբեր 2024.

---

#### Համագասպ Արքահամյան

- Կոնֆլիկտ և մասնավոր հավաքածու, *Համաշխարհայնացումը և սոցիալ-մշակութային արդի գործընթացները Հայաստանում*, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ, Երևան.
- Հուշարձանը սահմանին. Պահպանությունը և մատչելիությունը, *Պատերազմը, սահմանը և մշակույթը*, ԵՊՀ, Երևան, 18-19 ապրիլ 2024.
- Հին քաղաքի նոր կերպարը, *Հնագիտություն, ազգագրություն, բանագիտություն. միջազգային մոտեցումներ*, ՀԱԻ, Երևան, 14-15 դեկտեմբեր 2023.

#### Անուշ Սաֆարյան

- Աղբյուր հուշարձանը և ժամանակակից խաչքարերի առաջացման խնդիրը, *Պատմություն, մշակույթ և արդիականություն*, ԵՊՀ, Ծաղկաձոր, 2023.
- Սահմանը և նշանը, *Համաշխարհայնացումը և սոցիալ-մշակութային արդի գործընթացները Հայաստանում*, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ, Երևան, 2023.
- The Commemoration of the Patriotic War and the Prerequisites for the Dimensional-Sculptural Design of the First Khachkars, *International Conference on Architectural Heritage and Contemporary Architecture (ICAHCA 2023)*, Venice, 2023.
- Պատերազմը և հուշարձանը, *Պատերազմը, սահմանը և մշակույթը*, Երևան, 2024.